

ՏԱՐԱԾՈՒՆ ԿՈՆԻ ՖԼՈՒՆ (Swine Flu) ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ.- Ի՞նչ էր հարկավոր էք Իմանալ...

Ի՞նչ է Տարածուն ԿՈՆԻ Ֆլուն (նախապես ծանոթ որպես Խոզային Ֆլու):

Տարածուն ԿՈՆԻ Ֆլուն շնչարության սիստեմն վարակող մի հիվանդություն է, որի պատճառն է ֆլույի մի նոր վիրուս է, որ հետզհետե տարածվում է աշխարհի զանազան մասերում: Նա պատճառ է հանդիսացել բազմաթիվ մարդկանց հիվանդանոց փոխադրման եւ նույնիսկ մահվան ԱՄՆ-ի զանազան մասերում:

Տարածուն ԿՈՆԻ Ֆլուն Սեզոնային Ֆլույի նման է:

Ո՛չ: Ամեն տարի ֆլույի զանազան տիպեր կտարածվեն մեր համայնքների մեջ եւ պատճառ կհանդիսանան սեզոնային ֆլույին: Տարածուն ԿՈՆԻ Ֆլույի պատճառն վիրուսի մի նոր տիպ է, որը ԱՄՆ-ում սկսեց տարածվել 2009-ի Գարնան: Պետք է ասել որ թե՛ սեզոնային ֆլուն է թե՛ Տարածուն ԿՈՆԻ Ֆլուն կարող են վտանգավոր լինել:

Տարածուն ԿՈՆԻ Ֆլուն Ինչպե՞ս է Տարածվում:

Ֆլույի վիրուսներն ընդհանրապես անձից անձ են փոխանցվում հիվանդ անձի հազի կամ փոնչումի միջոցով սփռվող կաթիլներից: Ձեր զավակն կարող է նաեւ վարակվել ֆլույով մանրէներով լի մի հարդակի դպչելէ ետք իր աչերին, քթին, կամ բերանին դպչելիս: Ֆլույի վիրուսներն կարող են ապրել սեղանների, դռների բռնակների կամ ծորակների վրա:

Տարածուն ԿՈՆԻ Ֆլուն որքա՞ն Վտանգավոր է Փոքրահասակներին:

Մանուկների մեծ մասն պիտի կարողանան առանց հատուկ բուժումի ենթարկվելու առողջանալ Տարածուն ԿՈՆԻ Ֆլույից: Սակայն, սեզոնային ֆլույին նաման, Տարածուն ԿՈՆԻ Ֆլուն կարող է վտանգավոր առողջական հետեվանքների ու բարդությունների առաջնորդել՝ հատկապես թիսքի մեջ եղող մանուկներին: Բիսքն ավելի բարձր է մինչեւ 5 տարիքը (բայց մանավանդ 2 տարեկանից վար եղող մանուկների համար) մանավանդ եթե նրանք կրոնիկ հիվանդություններ ունեն, ինչպիսին են՝ շնչարգելությունն (asthma), սրտի հիվանդությունը, շաքարախտը, երիկամների հիվանդությունը եւ ընդհանրապես ներվային ու ներվա-մկանային բարդությունները: Եթե ձեր զավակն նման թիսքավոր խմբի մեջ է եւ ֆլույանման ախտանշան է ցույց տալիս, ձեր բուժժառայողին հետ կապվե՛ք անմիջապես:

Մանուկներն ի՞նչ Ախտանշաններ են Ցույց Տալիս Տարածուն ԿՈՆԻ Ֆլույից Վարակվելիս:

Տարածուն ԿՈՆԻ Ֆլույի ախտանշանների մեծ մասը նույնն է ինչ որ սեզոնային ֆլույինը: Սա ընդգրկում է ջերմ, չոր հազ, կոկորդի ցավ, լեցուն քիթ, մարմնային ցավեր, գլխացավ եւ հոգնածություն: Տարածուն ԿՈՆԻ Ֆլուն կարող է նաեւ փորհարություն, փսխել եւ ավելի վտանգավոր բարդություններ առաջացնել: Որոշ մանուկներ ջերմ պիտի չունենան:

Ե՞րբ Կարիքն ունեմ Շտապ Բժշկական Օգնություն Հայցել Զավկիս Համար:

Կարիքն ունեք շտապ բժշկական օգնության դիմել՝ ձեր զավկին համար երբ նա սրանցից որևէ մեկն ունի.-

- Արագ շնչարություն կամ շնչարգելություն
- Մորդի կապտավուն կամ մոխրագույնի մօտ գույն ստանալը
- Կարիքավոր չափով հեղուկներ չխմել
- Վտանգավոր կամ կրկնվող փսխումք
- Չկարողանալ միգել կամ լալիս արցունք արտադրել
- Չի արդնանում կամ մյուսների հետ չի հարաբերում
- Չի ուզում որ նրան գրկեք
- Ֆլուանման ախտանշանն գնալիս ու ավելի գորավոր ետ են վարադառնալիս՝ ջերմով ու ավելի վատ հագով:
- Կրծքի ու ստամոքսի ցավ կամ նրանց վրա ճնշում

Մանուկներն Ինչպե՞ս են Բուժվում Տարածուն H1N1 Ֆլույից:

Մեզոնային ֆլույին նման հեղուկներ խմելն ու հանգաստանալն ու դպրոց չերթալը կարեվոր հանգամանքներ են: Ձեր զավկին առատ թափանցիկ հեղուկներ տվե՛ք (ինչպիսին են ջուրը, հավի ջուրը, սպորտային խմելիքները եւ Ելեկտրոլիտները [electrolytes, Pedialyte®]) որպեսզի նրանք հեղուկազրկումից (dehydration) չտառապեն: Կարող եք ձեր զավկին նաեւ տալ ասետամինոֆեն (acetaminophen, ինչպիսին են իպոպրոֆենն ibuprofen, Tylenol®, Motrin®, Advil®) կամ նապրոկսեն, (ինչպիսին է Ալիվը [Aleve®]): **Ասալիքին (acetylsalicylic acid) ՄԻ՝** տվեք ձեր զավկին: Ֆլույի ավելի վտանգավոր կացությունների համար ձեր զավկին բժիշկն կարող է նրան հանձնարարել հակավարակիչ դեղեր: Այս կարող է հիվանդությունն մի քիչ մեղմացնել ու նրան տեվողությունն կարճացնել ու վտանգավոր բարդություններն արգիլել:

<i>Տարիք</i>	<i>Արե՛ք</i>	<i>Մի՛ Անեք</i>
5-ից 18 տարեկաններ	ՏՎԵ՛Ք ձեր զավկին ասետամենոֆեն (Tylenol®), իբոպրոֆեն (Advil®, Motrin®), կամ նապրոքսեն (Aleve®) ջերմի եւ մարմնային ցավերի համար: Սրանք ասալիքին չեն պարունակում: Ֆլույի դեղերը քննե՛ք տեսնելու համար թե դրանք ասալիքին պարունակու՞մ են:	ՄԻ՝ ՏՎԵ՛Ք ձեր զավկին ասալիքին կամ ասալիքին պարունակող դեղեր (Pepto-Bismol®): Սրանք կարող են մի հազվագյուտ բայց վտանգավոր բարդություն պատճառել, որը ծանոթ է «Reye’s syndrome» անունով: .
4 տարեկան ու վար	ՏՎԵ՛Ք ձեր զավկին փոքրերի ասետամենոֆեն (Children’s Tylenol®), փոքրերի իբոպրոֆեն (Children’s Motrin®), Ձեր զավկի բժիշկի հանձնարարություններին հետեվե՛ք եւ վստահ եղե՛ք որ դեղի ճիշդ քանակն էք տալիս:	ՄԻ՝ ՏՎԵ՛Ք ձեր զավկին ասալիքին կամ ասալիքին պարունակող դեղեր ՄԻ՝ ՏՎԵ՛Ք ձեր զավկին անտիհիստամին (antihistamines) պարունակող ֆլույի կամ հազի դեղորայք:
2 տարեկան եւ վար	Գործածե՛ք անանխային ջրաշոքի արտադրող սարք եւ ծծող սարք թանցր հեղուկներն մաքրելու եւ շնչարությունն բանալու համար Ձեր զավկի բժիշկի հանձնարարություններին հետեվե՛ք եւ վստահ եղե՛ք որ դեղի ճիշդ քանակն էք տալիս:	ՄԻ՝ ՏՎԵ՛Ք ձեր զավկին ասալիքին կամ ասալիքին պարունակող դեղեր: ՄԻ՝ ՏՎԵ՛Ք ձեր զավկին ֆլույի կամ հազի դեղորայք եթե նա 2 տարեկան եւ վար է:



Զավակս Տարածուն H1N1 Ֆլույի դեմ պատվաստման կարիքն ունի՞:

Այո՛, պատվաստումն այս ֆլուն ստանալու դեմ ամենալավ նիջոցն է: Տարածուն H1N1 Ֆլույի դեմ պատվաստն սարքվում է նույն միջոցներով ինչպես սեզոնային ֆլույի պատվաստներն են սարքվում ամեն տարի եւ նրանց նման ապահով եւ ազդու են: Նրանք առաջին հերթին պիտի Ապահովվեն կամ տրվեն.-

- Հղի կանանց
- Մարդկանց որոնք ապրում են 6 ամսական երեխաների հետ կամ նրանց են խնամում
- Շտապ օգնության խմբերի անդամներին ու բուժօժանայողներին
- 6 ամսական մանուկներից մինչեւ 24 տարեկաններին
- 25-ից 64 տարեկան մարդկանց որոնք սրտի կամ թոքերի հիվանդությունից, շնչարգելությունից (asthma), շաքարախտից կամ մարմնի տոկունության նվազումից են տառապում:

H1N1 ֆլույի դեմ պատվաստն պիտի ապահովվի երկու տեսակով.- ասեղի միջոցով կամ քթային սփռիչով (nasal spray): Խոսե՛ք ձեր բուժօժանայողին, իմանալու թե ո՞ր տեսակն ավելի լավ է ձեր երեխային:

Ուրիշ Ի՞նչ Կարող Եմ Անել Ընտանիքս Տարածուն H1N1 Ֆլույից Պաշտպանելու:

Պարզ եւ ամենօրյա քայլեր կարող են ձեզ ու ձեր ընտանիքն պաշտպանել ֆլույից:

- Հազալիս կամ փոնչալիս քիթն ու բերանը ծածկել թղթե թաշկինակով կամ հաքուստի մի կտորով:
- Ցեռքերն հաճախ լվանալ ջրով ու օճառով կամ ալ հատուկ մաքրիչ «ճել» գործածելով (gel sanitizers):
- Փորձել ձեր աչերին, քթին ու բերանին չդպչել, որով մանրէներն այդպես են տարածվում
- Հիվանդ մարդկանց հետ շփում չունենալ: Եթե Տարածուն H1N1 ֆլույից վարակված մի անձի հետ շփման մեջ էք եղել, հարց տվեք ձեր բուժօժանայողին եթե բուժման կարիքն ունեք, ֆլուն ստանալու ձեր շանսերն պակասեցնելու:
- Եթե հիվանդ էք, տանը մնացեք առնվազն մինչեւ ձեր ջերմի ավարտից 24 ժամ:

Հավելյալ Տեղեկության Համար.-

Հիվանդությունների Կանխարգիլման Կենդրոն (CDC)
(800) CDC-INFO կամ (800) 232-4636
www.cdc.gov/h1n1flu/

Կալիֆորնիա Նահանգի Հանրային Առողջության
Դիպարտամենտ
(888) 865-0564
www.cdph.ca.gov

Լոս Անճելոս Գավառի Հանրային Առողջության Դիպարտամենտ
<http://publichealth.lacounty.gov/H1N1>
Առողջական Ծառայությունների համար Զանգահարե՛ք.-
2-1-1 Համարին
Ելքերոնային Փոստ.- Listserv@listserv.ph.lacounty.gov
Եթե արձանագրվել էք ուզում «Subscribe DPHUPDATE
first name last name» գրե՛ք փոստի «subject» ի վայրին ու փոստին
մեջ:

